ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ 0014. ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9 հեռախոս՝ (010) 20-10-93	*«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությանը* */հասցեն՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59/*

ՈԴԴ 8.1 Ե-2887/13
«17» մայիսի 2013թ.

Սույն գրությանը կից ուղարկվում է թիվ ՎԴ 2074/05/13 գործով վերաքննիչ բողոքը մերժելու մասին Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի 15.05.2013թ. որոշումը:

Առդիր՝ դատարանի որոշումը «4» թերթից:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՕԳՆԱԿԱՆ՝ Ս.ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

Գործ թիվ ՎԴ/2074/05/13

« 15 » մայիսի 2013թ. գ. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան), (դատավոր Ա.Առաքելյան), քննելով ըստ հայցի «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ընդդեմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության՝ 2013թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների ժամանակ ՀՀ ոստիկանության գործողությունները (անգործությունը) ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, թիվ ՎԴ 2074/05/13 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 28.03.2013 թվականի որոշման դեմ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված վերաքննիչ բողոք,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության՝ 2013թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների ժամանակ ՀՀ ոստիկանության գործողությունները (անգործությունը) ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի /դատավոր Ք.Մկոյան/ 2013 թվականի մարտի 28-ի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

Չհամաձայնվելով նշված որոշմանը՝ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը 2013թ. ապրիլի 13-ի փոստային առաքմամբ բերել է վերաքննիչ բողոք:

Թիվ ՎԴ 2074/05/13 վարչական գործը Վերաքննիչ դատարան է մուտքագրվել 22.04.2013թ. և նույն օրը հանձնվել է դատավոր՝ Ա.Առաքելյանին:

Վերաքննիչ դատարանի /դատավոր՝ Ա.Առաքելյան/ 25.04.2013 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:

2. Բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

1.2. Դատարանի եզրահանգումները.

(….) Ներկայացված հայցով «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը, ՀՀ Նախագահի 2013թ. փետրվարի 18-ին կայացած ընտրությունների ժամանակ իրականացնելով դիտորդական առաքելություն և ՀՀ ոստիկանությանը ներկայացնելով մի շարք դիմումներ արձանագրված ընտրախախտումների վերաբերյալ, խնդրում է ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ ոստիկանության այդ գրությունների առնչությամբ դրսևորած ենթադրյալ անգործությունը: Նման պայմաններում հարկ է նախ պարզել, թե արդյոք դիմող կազմակերպությունը որևէ իրավական ակտով օժտված է սուբյեկտիվ իրավունքով պահանջելու ՀՀ ոստիկանությունից արձանագրված ընտրախախտումների ուղղությամբ ձեռնարկելու միջոցներ:

Հաշվի առնելով, որ դիմող կազմակերպությունը ՀՀ նախագահի 2013թ. փետրվարի 18-ին կայացած ընտրությունների ժամանակ իրականացրել է դիտորդական առաքելություն, հարկ է բացահայտել դիտորդական առաքելության իրավական կարգավիճակը: Այսպես՝ դիտորդական առաքելությունն իրենից ներկայացնում է ընտրական գործընթացի թափանցիկության, անաչառության, օրինականության և այլ սկզբունքների ապահովման լրացուցիչ երաշխիք: Որպես կանոն, դիտորդական առաքելության գործունեությունն ավարտվում է զեկույցի հրապարակմամբ, որի միջոցով դիտորդները հրապարակում են իրենց կողմից արձանագրված

ընտրախախտումները և արտահայտում են իրենց դիրքորոշումը ընտրական գործընթացների վերաբերյալ: Դրանով դիտորդները նպաստում են հանրության որոշակի վերաբերմունքի (վստահություն կամ անվստահություն) ձևավորմանը ընտրությունների արդյունքների նկատմամբ:

Հաշվի առնելով դիտորդական առաքելության դերն ու նշանակությունը ընտրական գործընթացի օրինականության ապահովման կարևորագույն գործում օրենսդիրը նախատեսել է դիտորդների մի շարք

իրավունքներ և պարտականություններ, ինչպես նաև նրանց գործունեության երաշխիքներ: Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածը սահմանում է.

1. Դիտորդը... իրավունք ունի...՝

1/ ներկա լինելու ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում նաև քվեարկության սենյակում:

2/ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և քվեաթերթիկների հաշվարկման

գործընթացներին .

3/ անարգել ծանոթանալու քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի կամ հանձնաժողովի տեղակալներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու տվյալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, ընտրական հանձնաժողովների որոշումներին, նիստերի արձանագրություններին, դատարանի համապատասխան վճիռներին, լիազոր մարմնի ընտրողին տրամադրված համապատասխան տեղեկանքին, ստանալու դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ (բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների), քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարելու քաղվածքներ ընտրողների ստորագրած ցուցակներից.

4/ ազատ տեղաշարժվելու քվեարկության սենյակում քվեաթերթիկների ու քվեատուփի դիտարկման համար.

5/ օգտվելու սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներից:

2. Դիտորդը... իրավունք չունի... միջամտելու ընտրական հանձնաժողովի իրավունքներին:

3. Դիտորդը քվեարկության օրը հետևում է ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և կարող է հանձնաժողովի նախագահին ներկայացնել իր դիտարկումներն ու առաջարկությունները:

4. Դիտորդի...՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք (այդ թվում ընտրական հանձնաժողովները) իրավունք չունի դիտորդին... դուրս հանելու քվեարկության սենյակից կամ ցանկացած այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա լինելուց, բացառությամբ նրանց ձերբակալելու կամ կալանավորելու դեպքերի:

5. «Դիտորդը... պարտավոր... (է) պահպանել սույն օրենսգրքի պահանջները»: Վերոգրյալից հետևում է, որ դիտորդն ունի օրենքով հստակ նախատեսված և իր

կարգավիճակից բխող իրավունքներ, որոնք ընդհանուր առմամբ ներառում են ընտրական գործընթացները դիտարկելու և դրանց վերաբերյալ իրենց դիրքորոշումը իրավասու մարմիններին ներկայացնելու հնարավորությունը: Դիտորդը որևէ իրավական ակտով իրավասու չէ պահանջելու, որպեսզի ՀՀ ոստիկանությունը միջոցներ ձեռնարկի իր կողմից արձանագրված խախտումների ուղղությամբ:

Դա բխում է սուբյեկտիվ իրավունքի նկատմամբ ձևավորված մոտեցումներից, որոնց համաձայն անձի իրավունքը բովանդակային առումով ներառում է այնպիսի վարքագծի դրսևորման հնարավորությունը, որն ուղղված է որոշակի իրավահարաբերություններում տվյալ անձի բնական շահերի բավարարմանը: Անձի սուբյեկտիվ իրավունքի շրջանակներից դուրս են համընդհանուր շահից բխող գործողությունները: Բնականաբար, յուրաքանչյուր իրավագիտակից անձ հետաքրքրված է տվյալ հասարակությունում տեղի ունեցող գործընթացների պատշաճության հարցում, սակայն այդ շահագրգռվածությունը չի կարող որակվել իրավական: Հասարակության գործունեության վրա ներազդելու ուղղությամբ անձն օժտված է այլ տեսակի լծակներով (քաղաքական, սոցիալական, հոգեբանական, մշակութային և այլն): Սակայն իրավական կառուցակարգերը գործում են բացառապես սուբյեկտիվ շահերի բավարարման առնչությամբ:

Ամբողջ վերոգրյալից պարզ է դառնում, որ դիմող կազմակերպությունը ներկայացված հայցով դատարանի քննության է ներկայացրել այնպիսի հարց, որն ուղղակիորեն չի առնչվում իր սուբյեկտիվ իրավունքներին: Այն, որ դիմողը ընդհանուր առմամբ շահագրգռված է ՀՀ-ում ոստիկանության մարմինների օրենքին համապատասխան գործելու ուղղությամբ, բավարար չէ դատարան դիմելու համար: Նշված իրավասության հիմքում դրված է սուբյեկտիվ շահագրգռվածության պայմանը, որը տվյալ դեպքում բացակայում է:

Նման պայմաններում ներկայացված հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության, քանի որ դատարանն իրավասու չէ քննարկելու ՀՀ ոստիկանության այն ակտերի իրավաչափության հարցը, որոնք չեն առնչվում դիմողի սուբյեկտիվ իրավունքներին: Հակառակ պարագայում վարչական դատարանը հանդես կգա որպես ՀՀ ոստիկանության վերադաս մարմին, որի արդյունքում կխախտվի ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իշխանությունների տարանջատման սկզբունքը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, ի թիվս, որոնց նախատեսված է. «եթե հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության» (1-ին կետ):

Նման պայմաններում, երբ ներկայացված հայցը ենթակա չէ վարչական քննության, հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման:

2. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստեր.

2.1.Դատարանը հայցադիմումը վերադարձնելու որոշմամբ հաստատված է համարել, որ Կազմակերպությունը 2013 թվականի փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների ժամանակ թվով 75 դիտորդների միջոցով իրականացրել է ընտրական տեղամասերում և ընտրական տեղամասերի շրջակայքում դիտորդական առաքելություն:

Դիտորդական առաքելության ընթացքում դիտորդների կողմից արձանագրված և քաղաքացիներից ահազանգերի միջոցով ստացված թվով 61 խախտումների վերաբերյալ տեղեկությունները ՀՀ ոստիկանություն է ներկայացվել 4 ժամը մեկ:

2.2. 2013թ. փետրվարի 18-ին կազմակերպության Ե/2013-18.02/98 գրությամբ ՀՀ ոստիկանության պետին է ներկայացրել քվեարկության օրը ժամը 08:00-ից մինչև 12:00-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպության դիտորդների կողմից Վանաձոր, Տաշիր, Սպիտակ, Իջևան քաղաքների և շրջակա գյուղերի ընտրատեղամասերում արձանագրված և քաղաքացիների կողմից ահազանգերի միջոցով ստացված թվով 30 խախտումների վերաբերյալ տեղեկություններ, որոնցից 10-ը վարչական բնույթի են եղել, իսկ 20-ը՝ քրեական:

2.3. Քվեարկության օրը՝ 2013թ. փետրվարի 18-ին կազմակերպությունը թիվ Ե/2013-18.02/99 գրությամբ ՀՀ ոստիկանության պետին է ներկայացրել քվեարկության օրը ժամը 12:00-ից մինչև 16:00-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպության դիտորդների կողմից Վանաձոր, Տաշիր, Սպիտակ, Իջևան քաղաքների և շրջակա գյուղերի ընտրատեղամասերում արձանագրած և քաղաքացիների կողմից ահազանգերի միջոցով ստացած 15 խախտումների վերաբերյալ տեղեկություններ, որոնցից 8-ը եղել են վարչական, իսկ 7-ը քրեական բնույթի խախտումներ:

2.4. 2013թ. փետրվարի 18-ին կազմակերպության Ե/2013-18.02/101 գրությամբ ՀՀ ոստիկանության պետին է ներկայացրել կազմակերպության դիտորդների կողմից ժամը 16:00-ից մինչև 20:00-ն ընկած ժամանակահատվածում Վանաձոր, Տաշիր, Սպիտակ, Իջևան քաղաքների և շրջակա գյուղերի ընտրատեղամասերում արձանագրված և քաղաքացիների կողմից ահազանգերի միջոցով ստացված թվով 16 խախտումների վերաբերյալ տեղեկություններ, որոնցից 8-ը եղել են վարչական, իսկ 8-ը քրեական բնույթի խախտումներ:

3. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

ՀՀ վարչական դատարանի կողմից խախտվել են ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածները և սխալ է մեկնաբանել ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածը

Նշված պնդումները պատճառաբանվում են հետևյալ կերպ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի, «անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը (այսուհետ՝ ակտ)»: Նույն օրենքի 70-րդ հոդվածի համաձայն վարչական մարմնի պոզիտիվ ակտերը, գործողությունները և անգործությունը կարող է բողոքարկվել թե վարչական, թե դատական կարգով:

3.1. Դատարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի՝ Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը, ՀՀ Նախագահի 2013թ. փետրվարի 18-ին կայացած ընտրությունների ժամանակ իրականացնելով դիտորդական առաքելություն ՀՀ ոստիկանությանը ներկայացրել է մի շարք դիմումներ արձանագրված ընտրախախտումների վերաբերյալ:

Դատարանի կողմից վիճարկվող որոշմամբ «բացահայտվել է» դիտորդական առաքելության իրավական կարգավիճակը և սույն որոշմամբ մեկնաբանվել է ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածը, որը սույն գործի շրջանակներում ընդհանրապես կիրառելի չե:

Կազմակերպությունը դիտորդական առաքելություն իրականացնելով հավաքել է հանցագործության և վարչական իրավախախտումների (զանցանք) կատարելու վերաբերյալ տեղեկություններ և պատշաճ կարգով 4 ժամը մեկ ներկայացրել ՀՀ ոստիկանության պետին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հանցագործության վերաբերյալ հաղորդումներ ներկայացնելու որևիցե սահմանափակում չի մտցնում ոչ դիտորդական առաքելություն իրականացրած ոչ այլ առաքելություն իրականացրած իրավաբանական անձանց համար և, հետևաբար ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածը սույն գործի շրջանակներում կիրառելի չէ:

Կազմակերպության հայցը վերաբերվել է ՀՀ ոստիկանության անգործությանը, որը դրսևորվել է հանցագործությունների և վարչական իրավախախտումների վերաբերյալ դիմումների վերաբերյալ արագ արձագանքմանը, որը կարգավորվում է ՀՀ ոստիկանության մասին օրենքով:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ոստիկանության խնդիրներն են օրենքին համապատասխան ապահովել՝

1/ մարդու անվտանգությունը սույն օրենքով նախատեսված դեպքերում.

2/ հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը և խափանումը.

3/ հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը, քրեական գործով նախնական քննությունը.

4/ հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգությունը.

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ոստիկանությունը օրենքով սահմանված կարգով և դեպքերում պարտավոր է պաշտպանել մարդու կյանքը, առողջությունը, պատիվը, արժանապատվությունը, իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը հանցավոր և այլ ոտնձգությունից:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ոստիկանությունը օրենքով սահմանված կարգով և դեպքերում պարտավոր է կանխել և խափանել հանցագործություններն ու այլ իրավախախտումները, բերման ենթարկել հանցանք կամ վարույթ պահանջող այլ իրավախախտում կատարած անձանց, պարզել հանցագործություններ և այլ իրավախախտումներ ծնող պատճառներն ու դրանց նպաստող պայմանները, ձեռնարկել համապատասխան միջոցներ դրանք վերացնելու ուղղությամբ:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանությունը պարտավոր է ապահովել հասարակական կարգի պահպանությունը փողոցներում, հրապարակներում, զբոսայգիներում և երկաթուղային կայարաններում, օդանավակայաններում, ընտրական տեղամասերում, այլ հասարակական վայրերում, դատական նիստերի ընթացքում (դատարանների միջնորդությամբ):

«ՀՀ ընտրական» օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության կենտրոնական և տարածքային մարմինները, դրանց ծառայություններն ու ստորաբաժանումները պարտավոր են ապահովել ընտրությունների անցկացման բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովների ու դրանց անդամների անկաշկանդ գործունեությունը: Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը ընտրությունների հետ կապված միջոցառումներում ապահովում է պատշաճ կարգ ու կանոն, հանձնաժողովի նախագահի պահանջով աջակցում հանձնաժողովներին, ապահովում է ընտրական փաստաթղթերի անվտանգ տեղափոխումն ու դրանց պահպանումն ընտրական հանձնաժողովներում:

3.2. Ինչ վերաբերվում է դատարանի այն պատճառաբանությանը, որ «....դատարանն իրավասու չէ քննարկելու ՀՀ ոստիկանության այն ակտերի իրավաչափության հարցը, որոնք չեն առնչվում դիմողի սուբյեկտիվ իրավունքներին» անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ և հիմքերով:

Դատարանը կազմակերպության իրավունքները դիտարկել է ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի լույսի ներքո, Լռակյաց շրջանցելով ՀՀ ընտրական օրենսգրքի 53-րդ հոդվածը, ՀՀ քրեական դատավարության, ՀՀ ոստիկանության և ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենքների դրույթները:

Ավելին՝ դատարանը անտեսել է այն հանգամանքը, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի հաղորդում ներկայացնելու հանցագործության և վարչական իրավախախտման վերաբերյալ, իսկ ՀՀ ոստիկանությունը խրախուսել և շարունակում է խրախուսել հանցագործությունների բացահայտման գործընթացին աջակցող իրավաբանական և ֆիզիկական անձանց:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը լայն իրավունքներ է սահմանում հանցագործության մասին հաղորդում ներկայացրած ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, հանցագործությունների մասին հաղորդումների քննարկումը և դրանց վերաբերյալ որոշումները կայացվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի շրջանակներում, իսկ հանցագործությունների և վարչական իրավախախտումների կանխարգելման պարտավորությունները կրում է ՀՀ ոստիկանությունը, որը կարգավորվում է ՀՀ ոստիկանության մասին օրենքով այլ ոչ թե ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածով:

3.3. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, իսկ 19-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀայաստանի Հանրապետության կողմից 2002թ. ապրիլի 26-ին վավերացված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (...), ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի բաղադրիչներից մեկն է դատարան դիմելու իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների: Բայց և այնպես, կիրառվող սահմանափակումները չպետք է նեղացնեն կամ նվազեցնեն անձի իրավունքներն այնպես կամ այն աստիճան, որ թուլացնեն իրավունքի բուն էությունը: Ընդ որում, սահմանափակումն անհամատեղելի կլինի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և, թե չլինի ողջամիտ հավասարակշռության կապ գործադրված միջոցներին հետապնդվող նպատակի միջև (տե՛ս, mutatis mutandis, Paykar Yev Haghtanak Ltd. v. Armenia, no. 21638/03, judgement of 20 December 2007, 44, Khalfaoui v. France, no. 34791/97, 35, EGHR 1999IX, and Papon v. France, no. 54210/00, 90,

EGHR 2002VII, Guerin v. France, judgment of 29 July 1998, Reports 1998V, p. 1867, 37; Zvolsky and Zvolska v. the Czech Republic, judgment of 12 February 2003, 4647/:

3.4. Դատարանը Կազմակերպության ներկայացրած հայցի վարույթ ընդունելու փուլում եզրակացրել է, որ եթե տվյալ հայցը վարույթ ընդունվի, ապա վարչական դատարանը հանդես կգա որպես ՀՀ ոստիկանության վերադաս մարմին, որի արդյունքում կխախտվի ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իշխանությունների տարանջատման սկզբունքը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հայցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչելու որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել սույն օրենսգրքի 65-67-րդ հոդվածներին համապատասխան: Սույն գործով պաշտոնատար անձանց կողմից իրականացված վարչարարության արդյունքում ընդունված չէ գրավոր վարչական ակտ, այլ՝ կատարված են գործողություններ, իսկ վարչական մարմինների գործողությունների դեմ հայցատեսակը նախատեսված է ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 68-րդ հոդվածով (տես՝ Վճռաբեկ դատարանի 03.12.2010թ. վարչական գործ թիվ ՎԴ/0277/05/09 2010թ. որոշումը): Պաշտոնատար անձանց կողմից իրականացրած գործողությունները դրանք ավարտվելու պահից դադարել են իրավաբանական ուժ ունենալուց:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը ՎԴ/2450/05/11 գործով 15.07.2011թ. «Բողոքը բավարարելու մասին» որոշման մեջ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը՝ հայցի վարույթ ընդունելու փուլում, եթե դատարանը գտնի, որ կազմակերպության իրավունքները ավելի արդյունավետ պաշտպանելու և վերականգնելու նպատակով հայցատեսակը սխալ է ընտրված, ապա դատարանը բոլոր դեպքերում պարտավոր է վարույթ ընդունել հայցը և դատական նիստի ընթացքում պարզել հայցի առարկան և հիմքը:

Վարչական վերաքննիչ դատարանը որոշման մեջ հղում է կատարել ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ Կոնվենցիայի 6-րդ հոդվածներին, ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 6-րդ հոդվածին (գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե ("ex officio")), 8, 86-րդ հոդվածներին և հանգել է եզրակացության, որ «եթե վեճը ծագել է հանրային իրավահարաբերություններից և այն վերապահված չէ նույն հոդվածի 2-րդ կետում նշված մարմինների քննությանը, ապա այդ գործը ենթակա է քննության ՀՀ Վարչական դատարանում»:

Կազմակերպությունը իրացնելով ՀՀ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով երաշխավորված իրավունքը՝ մատնանշում է վերոգրյալ դատական ակտում դատարանների կողմից օրենքներին տրված մեկնաբանությունները, քանի որ դրանք կիրառելի են սույն հայցով որոշում կայացնելիս:

Այսպիսով, բողոքաբերը գտնում է, որ դատարանի կողմից թույլ տրված խախտման արդյունքում դատարանը խախտել է կամ սահմանափակել է իր դատարան դիմելու և դատարանում լսված լինելու իրավունքը, ուստի անվիճելի է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածների խախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117,1-117.4 հոդվածներով՝ բողոքաբերը խնդրում է վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ: Վերացնել ՀՀ վարչական դատարանի 2013թ. մարտի 28-ի թիվ ՎԴ/2074/05/13 վարչական գործով կայացված որոշումը:

3. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Ուսումնասիրելով վերաքննիչ բողոքը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն ենթակա է մերժման, հետևյալ հիմնավորմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝ **խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա**՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված **իրավունքները և ազատությունները**:

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցապահանջով խնդրել է 2013թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների ժամանակ ՀՀ ոստիկանության գործողությունները (անգործությունը) ճանաչել ոչ իրավաչափ:

Վերը նշված պահանջով ՀՀ վարչական դատարան հայց ներկայացնել կարող են **միայն** այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնց **սուբյեկտիվ** իրավունքները և ազատությունները խախտվել են: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը չի հանդիսանում նշված գործով շահագրգիռ անձ, նրա ոչ մի սուբյեկտիվ իրավունք չի խախտվել, ուստի, կազմակեպությունը իրավասու չէ ՀՀ ոստիկանությունից պահանջելու արձանագրված ընտրախախտումների ուղղությամբ /եթե այդպիսիք առկա են/ միջոցներ ձեռնարկելու:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ին կայացած ընտրությունների ժամանակ իրականացրել է դիտորդական առաքելություն և այդ կապակցությամբ մատնանշում, որ դիտորդական առաքելության նպատակն ընտրական գործընթացների վերաբերյալ հավաստի տեղեկությունների հավաքումն է և դրանց հիման վրա անկախ եզրակացության կազմումը:

Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները ընտրությունների վերաբերյալ իրենց զեկույցները ներկայացնում են կենտրոնական ընտրական հանձնաժողով, իսկ միջազգային դիտորդական կազմակերպությունները՝ նաև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:

ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածը սահմանում է.

1. Դիտորդը իրավունք ունի՝

1) ներկա լինելու ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում:

(…)

2) կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին.

3) անարգել ծանոթանալու քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու տվյալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, ընտրական հանձնաժողովների որոշումներին, նիստերի արձանագրություններին, դատարանի համապատասխան վճիռներին, լիազոր մարմնի՝ ընտրողին տրամադրած համապատասխան տեղեկանքին, ստանալու դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ (բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների), քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարելու քաղվածքներ ընտրողների ստորագրած ցուցակներից.

4) ազատ տեղաշարժվելու քվեարկության սենյակում՝ քվեաթերթիկների ու քվեատուփի դիտարկման համար.

5) օգտվելու սույն օրենքով նախատեսված այլ իրավունքներից:

2. Դիտորդն իրավունք չունի միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին:

3. Դիտորդը քվեարկության օրը հետևում է ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և կարող է հանձնաժողովի նախագահին ներկայացնել իր դիտարկումներն ու առաջարկությունները:

4. Դիտորդի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք (այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները) իրավունք չունի դիտորդին դուրս հանելու քվեարկության սենյակից կամ ցանկացած այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա լինելուց, բացառությամբ նրանց ձերբակալելու կամ կալանավորելու դեպքերի:

5. Դիտորդը պարտավոր է պահպանել սույն օրենսգրքի պահանջները»:

Վերոգրյալ իրավական նորմը հստակորեն սահմանում է դիտորդի իրավունքները, որոնք ներառում են ընտրական գործընթացները դիտարկելու և դրանց վերաբերյալ իրենց դիրքորոշումը իրավասու մարմիններին ներկայացնելու հնարավորությունը, ուստի, Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում Վարչական դատարանի եզրահանգումն այն մասին, որ. «Դիտորդը որևէ իրավական ակտով իրավասու չէ պահանջելու, որպեսզի ՀՀ ոստիկանությունը միջոցներ ձեռնարկի իր կողմից արձանագրված խախտումների ուղղությամբ….: Ամբողջ վերոգրյալից պարզ է դառնում, որ դիմող կազմակերպությունը ներկայացված հայցով դատարանի քննությանն է ներկայացրել այնպիսի հարց, որն ուղղակիորեն չի առնչվում իր սուբյեկտիվ իրավունքներին: Այն, որ դիմողը ընդհանուր առմամբ շահագրգռված է Հայաստանի Հանրապետությունում ոստիկանության մարմինների՝ օրենքին համապատասխան գործելու ուղղությամբ, բավարար չէ դատարան դիմելու համար: Նշված իրավասության հիմքում դրված է **սուբյեկտիվ շահագրգռվածության** պայմանը, որը տվյալ դեպքում բացակայում է: Նման պայմաններում ներկայացված

հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության, քանի որ դատարանն իրավասու չէ քննարկելու ՀՀ ոստիկանության այն ակտերի իրավաչափության հարցը, որոնք չեն առնչվում դիմողի սուբյեկտիվ իրավունքներին»:

Բողոքաբերը նշում է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հանցագործության վերաբերյալ հաղորդումներ ներկայացնելու որևիցե սահմանափակում չի մտցնում և մատնանշում է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի մի շարք հոդվածներ, որոնք պետք է կիրառվեին, սակայն Վարչական դատարանի կողմից չեն կիրառվել: Նշվածի կապակցությամբ Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ իսկապես ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հանցագործության վերաբերյալ հաղորդումներ ներկայացնելու որևիցե սահմանափակում չի մտցնում, սակայն այդ հանգամանքը՝ ՀՀ ոստիկանության գործողությունները (անգործությունը) ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով հայցադիմումը Վարչական դատարանի կողմից վարույթ ընդունելու խնդրի լուծման կապակցությամբ, որևէ նշանակություն ունենալ չի կարող:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից մատնանշված թիվ ՎԴ 2450/05/11 վարչական գործով Վարչական վերաքննիչ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման սույն գործով որպես նախադեպ կիրառելու խնդրին, ապա Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում մատնանշել, որ հայցը Վարչական դատարանի քննությանը ենթակա չլինելու պարագայում՝ հայցադիմումի ընդունման և հետագա ճշգրտման վերաբերյալ բողոքաբերի պնդումը դառնում է իմաստազուրկ:

Ամբողջ վերոգրյալի հիմքով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ հոդվածի 2-րդ մասով և 117.14-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության բողոքը մերժել՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 28.03.2013 թվականի թիվ ՎԴ 2074/05/13 վարչական գործով կայացված որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան՝ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ